Ուղեցույց

AMX
Central Depository of Armenia

2023

Օգտատիրոջ Ձեռնարկ

«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲ Ընկերության
Բջջային եվ Վեբ Հավելվածներ

Վ. Սարգսյան 26/1, 5-ր դ հարկ, Հ Հ , Երևան 0010
+374 60 615 555
info@amx.am
cda.am

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ստորև նշված դեպքերի ի հայտ գալու դեպքում (ինչպես համակարգ առաջին անգամ մուտք գործելու, այնպես էլ ընթացիկ օգտագործման ժամանակ) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ ընկերություն (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) հորդորում է անհապաղ այդ մասին տեղեկացնել Ձեզ սպասարկող հաշվի օպերատորին և զերծ մնալ Կենտրոնական դեպոզիտարիայի բջջային և վեբ հավելվածները օգտագործելուց.

1. Ամբողջությամբ չեք ծանոթացել շահագործման պահին ուժի մեջ գտնվող՝ Կենտրոնական դեպոզիտարիայի «Բջջային և վեբ հավելվածների գործունեության և օգտագործման» կանոններին, կամ
2. Ամբողջությամբ չեք ծանոթացել շահագործման պահին ուժի մեջ գտնվող սույն Ուղեցույցին, կամ
3. Վերոնշյալ կանոններում կամ ուղեցույցում առկա կարգավորումները Ձեր գնահատմամբ հակասում են օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված Ձեր իրավունքներին, լիազորություններին կամ պարտականություններին,կամ
4. Ձեր գնահատմամբ առկա են հանգամանքներ, որոնց պատճառով կարող եք կրել էլեկտրոնային խարդախության զոհ դառնալու ռիսկ, կամ
5. Լիարժեք ծանոթ չեք էլեկտրոնային հաշիվների և գաղտնաբառերի անվտանգության ապահովման սկզբունքներին, կամ
6. Ցանկանում եք ձեզ սպասարկող հաշվի օպերատորի հետ աշխատել բացառապես ֆիզիկական շփման միջոցով, կամ
7. Ձեր էլեկտրոնային սարքերի ծրագրային ապահովումը ծրագրավորող ընկերության կողմից առաջարկվող վերջին տարբերակը չէ, կամ
8. Ձեր էլեկտրոնային սարքերում գտնվող՝ Կենտրոնական դեպոզիտարիայի բջջային և վեբ հավելվածները Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից առաջարկվող վերջին տարբերակը չեն, կամ
9. Ձեր էլեկտրոնային սարքերի վրա գտնվող ծրագրային ապահովումն աշխատում է «JAILBREAK» սկզբունքներով:

Շահագործելով Կենտրոնական դեպոզիտարիայի բջջային և վեբ հավելվածները՝ հաճախորդը հաստատում և երաշխավորում է, որ վերոնշյալ իրավիճակներից ոչ մեկն ի հայտ չի եկել, և ամբողջությամբ ընդունում և հաստատում է, որ Կենտրոնական դեպոզիտարիան ազատվում է ցանկացած պատասխանատվությունից, որը կարող է առաջանալ վերոնշյալ իրավիճակների ի հայտ գալու դեպքում: Միևնույն ժամանակ, հաճախորդը պատասխանատվություն է կրում Կենտրոնական դեպոզիտարիայի կորուստների համար, եթե հաճախորդի մոտ ի հայտ են եկել վերոնշյալ իրավիճակները և վերջինս չի տեղեկացրել իրեն

սպասարկող հաշվի օպերատորին և/կամ շարունակել է շահագործել Կենտրոնական դեպոզիտարիայի բջջային և վեբ հավելվածները:

Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնները և ուղեցույցները պարբերաբար փոփոխվում են և հրապարակվում Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական կայքում https://cda.am/am:

Բովանդակություն

Ներածություն……..…2

Բաժին 1. Օգտատիրոջ գրանցում…...……..……..……...3

Բաժին 2. Մուտք…...……..…….....6

Բաժին 3. Գլխավոր էջ…….…….....8

3. 1 Անձնական տվյալներ……9

3. 2 Կարգավորումներ…… 10

Բաժին 4. Արժեթղթեր……...11

4.1. Դիտել մանրամասն……...13

4.2. Պորտֆոլիոյի փոխանցում……...13

4.3. Մնացորդի հարցում……..14

4.4. Գործարքի հարցում…….…15

4.5. Կատարել փոխանցում…….....16

4.5.1. Հասարակ փոխանցում…….…16

4.5.2. Ֆոնդի փոխանցում……...18

4.5.3. DvP-FoP փոխանցումներ…….…19

4.6. Այլ……...22

Բաժին 5. Էլեկտրոնային քվեարկություն…….....24

Բաժին 6. Կենսաթոշակային քաղվածք…….28

Բաժին 7. Հաղորդագրություններ..…….....30

Բաժին 8. Վճարումներ……31

Բաժին 9. Մեր մասին……..33

Ներածություն

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի բջջային և վեբ հավելվածները միտված են առցանց հարթակ տեղափոխելու դեպոզիտար ծառայություններից օգտվելու և հաշիվը կառավարելու մի շարք հնարավորությունները: Այդ թվում՝ հաշվի մնացորդի դիտում, կատարել գործարքներ, մասնակցել էլեկտրոնային քվեարկության, գործողություններ նշված հաշվով, Dvp-Fop (Ներքին և Արտաքին):

Հավելվածի օգտագործումն անվճար է: Այն հասանելի է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Հավելվածից կարող են օգտվել այն իրավաբանական և ֆիզիկական անձիք, ովքեր որևէ օպերատորի մոտ ունեն բացված արժեթղթային հաշիվ:

Կայքի հղում - https://online.cda.am/

Համատեղելի է հետևյալ բրաուզերների նշված տարբերակների և ավելի նոր տարբերակների հետ:

Chrome 7+

Safari 12+

Microsoft IE or Edge 18+

Mozilla 68+

Opera 58+

Համատեղելի է հետևյալ ՕՀ-ների նշված տարբերակների և ավելի նոր տարբերակների հետ:

Android 7.1+

IOS 10+

Բաժին 1. Օգտատիրոջ գրանցում

Մուտք գործելով հավելված, էջի աջ վերևի անկյունում առկա է լեզուն փոխելու հնարավորություն: Հասանելի են օգտագործման երեք լեզուներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնական դեպոզիտարիայի համակարգերում մուտքագրված տեղեկությունները մեծապես հայերեն կամ անգլերեն են, իսկ Կենտրոնական դեպոզիտարիան իրավասու չէ կատարել մուտքագրված տեղեկատվության թարգմանություն՝ այն դեպքերում, երբ ռուսերեն տվյալներ առկա չեն, ռուսերեն լեզու ընտրելու դեպքում այդ տեղեկությունները կարտացոլվեն անգլերեն:

Մինչ Հավելվածում գրանցվելը, անհրաժեշտ է համոզվել, որ Ձեզ սպասարկող հաշվի օպերատորին տրամադրել եք վավեր և Ձեր կառավարման ներքո գտնվող էլեկտրոնային փոստի հասցե: Հակառակ դեպքում անհրաժեշտ է զերծ մնալ հավելվածները շահագործելուց:

Եթե դեռ գրանցված օգտատեր չեք՝ անհրաժեշտ է կատարել «Գրանցվա՞ծ չեք» հրահանգը վեբ տարբերակում կամ «Գրանցվել» հրահանգը բջջային տարբերակում:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Մինչ գրանցումն անհրաժեշտ է կարդալ և ծանոթանալ Կենտրոնական դեպոզիտարիայի «Գաղտնիության քաղաքականությանը» և «Օգտագործման պայմաններին» և հաստատել դրանք կարդալու և դրանցում առկա դրույթների հետ ամբողջությամբ

համաձայնելու փաստը՝ ակտիվացնելով համապատասխան դաշտը: Հարցերի դեպքում կարող եք դիմել Ձեզ սպասարկող օպերատորին:

Գրանցման էջում անհրաժեշտ է ընտրել «Իրավաբանական անձ» կամ «Ֆիզիկական անձ» դաշտերից մեկը:

Որպես *<u>ֆիզիկական անձ</u>* գրանցվելիս՝ մուտքագրեք անձնագրային, նույնականացման քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) տվյալներից[1] որևէ մեկը և ընտրեք օպերատորին[2] բացվող ցանկից (եթե օպերատորները 1-ից ավել են, մյուսներին կարող եք ավելացնել համակարգ մուտք լինելուց հետո):

Որպես *<u>իրավաբանական անձ</u>* գրանցվելիս՝ մուտքագրեք ՀՎՀՀ-ն և ընտրեք օպերատորին բացվող ցանկից (եթե օպերատորները 1-ից ավել են, մյուսներին հնարավոր է ավելացնել համակարգ մուտք լինելուց հետո):

«Գաղտնիության քաղաքականությանը» և «Օգտագործման պայմաններին» համաձայնության համապատասխան նշումն իրականացնելուց հետո գրանցվել:

<u>Վեբ տարբերակ</u>



<u>Բջջային տարբերակ</u>



Նոր բացվող պատուհանում համակարգն ավտոմատ կեպով գեներացնում է օգտանուն, որը ենթակա չէ փոփոխման: Անհրաժեշտ է սահմանել գաղտնաբառ, որը բաղկացած է առնվազն 8 նիշից և պարունակում է մեծատառ, փոքրատառ, թվանշան և սիմվոլ: Նշված

[1] Ոչ ռեզիդենտ անձանց դեպքում նույնականացում իրականացվում է միայն անձնագրային տվյալով

[2] Եթե օպերատորի մոտ տվյալ օգտատերը կասեցված է, ապա հավելված վերջինս չի կարող գրանցվել, իսկ եթե կասեցումը եղել է գրանցումից հետո՝ չի կարող մուտք լինել

պահանջներին համապատասխան, մուտքագրել գաղտնաբառը 2 անգամ, ինչպես նաև նշված օպերատորի մոտ օգտատիրոջ գրանցած էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ հաստատման կոդը, «Գաղտնիության քաղաքականությանը» և «Օգտագործման պայմաններին» օգտատիրոջ համաձայնությունը հաստատող նշումը կրկին իրականացնելուց հետո կատարել «Մուտք» հրահանգը: Նշված գործողություններն իրականացնելուց հետո, բացվում է հավելվածի գլխավոր էջը:

Հաստատման կոդը վավեր է 30 րոպե: Էլ. հասցեին որևէ պատճառով հաստատման կոդ չստանալու դեպքում հնարավոր է ստանալ նոր կոդ՝ սեղմելով «Նորից ուղարկել» կոճակը:

<u>Վեր տարբերակ</u>



<u>Բջջային տարբերակ</u>

Եթե գրանցումը, որևէ պատճառով կիսատ է մնացել, նույնիսկ եթե մուտքանուն ձևավորվել է, սակայն գաղտնաբառ սահմանված ժամանակահատվածում(30 րոպե) չի սահմանվել, ապա անհրաժեշտ է կրկին անցնել գրանցման բոլոր փուլերը:

Բաժին 2. Մուտք

Եթե արդեն իսկ գրանցված օգտատեր եք, ապա մուտքագրեք «Օգտանուն» ու «Գաղտնաբառ» դաշտերը և սեղմեք «Մուտք» կոճակը:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Գաղտնաբառը 5 անգամ սխալ հավաքելուց հետո հաշիվը բլոկավորվում է: Ապաբլոկավորելու համար դիմեք Ձեր օպերատորին:

Գաղտնաբառը մոռանալու դեպքում, անհրաժեշտ է սեղմել «Մոռացե՞լ եք Ձեր գաղտնաբառը» կոճակը, բացվող էջում լրացնել «Օգտանուն»-ը և սեղմել «Ստանալ կոդը» կոճակը:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Էլ. հասցեին[3] կուղարկվի նամակ՝ ժամանակավոր հաստատման կոդով, որը վավեր կլինի 30 րոպե: Ստացված կոդը լրացրեք «Հաստատման կոդ» դաշտում և սեղմեք «Վերականգնել գաղտնաբառը» կոճակը (բջջային տարբերակի դեպքում կոդը ճիշտ հավաքելուց հետո ավտոմատ բացվում է նոր գաղտնաբառ սահմանելու էջը):

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



[3] Օգտատերի մուտքագրված էլ. հասցե

Նոր բացվող պատուհանում 2 անգամ լրացրեք Ձեր կողմից սահմանվող նոր գաղտնաբառը[4] և սեղմեք «Հաստատել»/«Փոխել գաղտնաբառը» կոճակը:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ

[4] **Գաղտնաբառը** պետք է պարունակի առնվազն 8 նիշ՝ մեծատառ, փոքրատառ, թվանշան և սիմվոլ:

Բաժին 3. Հաշվի նկարագիր

Վեբ տարբերակով մուտք լինելու դեպքում հավելվածի վերևի աջ անկյունում տեսանելի է օգտատիրոջ անվանումը, ինչպես նաև առկա է լեզուն փոխելու հնարավորություն: Եթե օգտատիրոջ անունը սխալ է գրված, անհրաժեշտ է տեղեկացնել Ձեզ սպասարկող հաշվի օպերատորին: Օգտատիրոջ անվան վրա սեղմելիս բացվում է գործողությունների հետևյալ ցանկը՝

1. *Դիտել անձնական տվյալները*
    - Ջնջել հաշիվը
2. *Կարգավորումներ* ՝
    - Փոխել գաղտնաբառը
    - Էլ. հասցեի ծանուցումներ
3. *Դուրս գալ:*

Բջջային տարբերակով մուտք լինելու դեպքում օգտատիրոջ նկարի վրա սեղմելիս բացվում է գործողությունների հետևյալ ցանկը՝

1. *Դիտել անձնական տվյալները*
2. *Փոխել գաղտնաբառը*
3. *Կարգավորումներ* ՝
    - Ակտիվացնել FaceID[5]/TouchID
    - Ակտիվացնել մութ ռեժիմը
    - Փոխել հավելվածի լեզուն
    - Ծանուցումներ
    - Էլ. հասցեի ծանուցում
    - Ջնջել հաշիվը
4. *Մեր մասին* ՝
    - Դեպոզիտարիայի մասին
    - Քվեարկության մասին
    - Նորություններ
    - Դիմել աջակցության կենտրոն
    - Հաճախ տրվող հարցեր
    - Կապ
5. *Դուրս գալ համակարգից:*

Վեբ տարբերակ *Բջջային տարբերակ*

[5] FaceID-ին ակտիվ է միայն iOS օգտագործողների համար





Օգտատերը, սեփական նախաձեռնությամբ, չի կարող որևէ փոփոխություն իրականացնել անձնական տվյալներում: Անհամապատասխանությունների առկայության դեպքում պետք է դիմել սպասարկող հաշվի օպերատորին, որպեսզի վերջինս կատարի տվյալների փոփոխություն/թարմացում:

Հավելվածում 20 րոպե անընդմեջ գործողություն չկատարելու դեպքում, հավելվածից օգտատերն ավտոմատ կերպով դուրս է գալիս և հետագայում գործողություններ իրականացնելու համար պահանջում է նոր մուտքագրում:

3.1 Անձնական տվյալների դիտում

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ

Վեբ տարբերակում «Ջնջել հաշիվը[6]» հրահանգը իրականացնելիս բացվող պատուհանում կրկին անգամ կատարել «Ջնջել հաշիվը» հրահանգը: Հաշիվը ջնջելուց հետո բոլոր որոնողական համակարգերը և սարքավորումները ավտոմատ կերպով օգտատիրոջը դուրս կհանեն CDA Online համակարգից:

3.2 Կարգավորումներ

Գաղտնաբառը փոխելու համար «Փոխել գաղտնաբառը» ենթաբաժնում անհրաժեշտ է մուտքագրել գործող գաղտնաբառը, որից հետո գաղտնաբառի սահմանման կանոններին [7]համապատասխան մուտքագրեք նոր սահմանվող գաղտնաբառը երկու անգամ և հաստատեք: Բջջային տարբերակում գաղտնաբառը կարող եք փոխել օգտատիրոջ նկարի վրա սեղմելիս բացված գործողությունների ցանկի «Փոխել գաղտնաբառը» հրամանի օգնությամբ:

«Էլ. հասցեի ծանուցումներ»/«Ծանուցումներ» ենթաբաժնում նշում եք այն ծանուցումների տեսակները, որոնց գծով ցանկանում եք հաղորդագրություն ուղարկվի Ձեր էլ. հասցեին կամ բջջային հեռախոսին:

Բջջային տարբերակի «Կարգավորումներ» բաժնից, կախված բջջային հեռախոսի հնարավորություններից և ՕՀ-ից, հնարավոր է ակտիվացնել FaceID, TouchID և մութ ռեժիմ ֆունկցիաները: Ակտիվացնելով համապատասխան տողերը՝ ծանուցումները կարող եք ստանալ նաև Ձեր բջջային հեռախոսին, միևնույն բաժնից կարող եք փոխել հավելվածի լեզուն(հայերեն, անգլերեն, ռուսերեն) և ջնջել օգտահաշիվը հավելվածից:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



[6] Բջջային տարբերակում «Ջնջել հաշիվը» հրահանգը գտնվում է «Կարգավորումներ» բաժնում:
[7] Գաղտնաբառը պետք է պարունակի առնվազն 8 նիշ՝ մեծատառ, փոքրատառ, թվանշան և սիմվոլ:

Բաժին 4. Հիմնական

«Հիմնական» էջում տեսանելի է գրանցման էջում Ձեր ընտրած օպերատորը՝ համապատասխան հաշվեհամարով:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Օպերատոր ավելացնելու համար անհրաժեշտ է կատարել «*Ավելացնել օպերատոր*» հրահանգը վեբ տարբերակում կամ “+” նշանը բջջային տարբերակում: Բացված պատուհանում ցույց է տալիս Ձեր անձնական տվյալներով Depend համակարգում հայտնաբերված այլ հաշիվներ, որոնք դեռ չեն ավելացվել հավելված: Նշելով օպերատորին՝ կարելի է համապատասխան ավելացում կատարել հավելվածում: Նոր բացվող պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը[8] և ավելացնել օպերատորին:

Վեբ տարբերակ

8 Հաստատման կոդը վավեր է 30 րոպե, նշված ժամանակահատվածը լրանալու դեպքում կամ էլ. հասցեին որևէ պատճառով հաստատման կոդ չուղարկվելու դեպքում հնարավոր է ստանալ նոր կոդ՝ սեղմելով «Նորից ուղարկել» կոճակը:





<u>Բջջային տարբերակ</u>



Եթե օպերատորի մոտ գրանցված տվյալներում կան թերություններ (օրինակ՝ չկա գրանցված էլ. հասցե), ապա այդ օպերատորի տողն ակտիվ չէ և հնարավոր չէ ավելացնել:

«Հիմնական» էջում հնարավոր է կատարել հետևյալ գործողությունները.

- Պատճենել նշանի միջոցով պատճենել տվյալ օպերատորի հաշվեհամարը
- Եթե օպերատորները մեկից ավել են, «Ջնջել» հրահանգի կամ «X» նշանի միջոցով հեռացնել օպերատորի հաշիվը հավելվածից[9]
- Օպերատորներից մեկին տալ «Հիմնական» կարգավիճակ, համապատասխան նշումն իրականացնելու միջոցով: Այս դեպքում հավելված մուտք գործելիս գլխավոր էջում ցուցադրվում է տվյալ օպերատորի մոտ գրանցված օգտատիրոջ անձնական տվյալները: Այս կարգավորումն ենթակա է փոփոխման ցանկացած ժամանակ: Ընտրված կարգավիճակով հաշիվը Հավելվածի տեսանկյունից համարվում է հիմնական հաշիվ և այլ հաշիվների հետ անմիջական կապ չունեցող

[9] Մեկ օպերատորի դեպքում, «Ջնջել» հրահանգը ակտիվ չէ

տեղեկատվությունն ուղարկվելու է հիմնական հաշվում գրանցված էլ. փոստի հասցեին:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Հավելվածի «Հիմնական» էջում «Արժեթղթերի ցանկ» կոճակը սեղմելիս բացվում է տվյալ հաշվեհամարով արժեթղթերի ցանկը, որտեղ տեսնում ենք թողարկողի անվանումը, արժեթղթերի եզակի համարը (ԱՄՏԾ), տեսակը, ծավալը, անվանական արժեքը, արժեթուղթը սառեցված է թե ոչ, ինչպես նաև տվյալ արժեթղթի գծով առկա է քվեարկություն, թե ոչ[10]:

Գործողություններ կետի ներքո առկա են հետևյալ հնարավորությունները.

- Նշված արժեթղթի գծով մանրամասն տեղեկատվության դիտում
- Կատարել փոխանցումներ[11]
- Իրականացնել մնացորդի հարցում[12]
- Գործարքի հարցում[13]

Վեբ տարբերակ

[10] Վեբ տարբերակում, եթե կցված նկարը կարմիր է, ապա քվեարկություն չկա, եթե կանաչ՝ առկա է քվերակություն:
[11] Տե՛ս առավել մանրամասն ուղեցույցի 4.4 ենթաբաժիններում
[12] Տե՛ս առավել մանրամասն ուղեցույցի 4.2 ենթաբաժնում
[13] Տե՛ս առավել մանրամասն ուղեցույցի 4.3 ենթաբաժնում





Բջջային տարբերակ





Գործողություններ

Դիտել մանրամասն - օպերատորի տվյալների մանրամասն դիտում

Մնացորդի հարցում - միջոցների մնացորդի մասին հարցում

Գործարքի հարցում - գործարքների պատմության հարցում

Կատարել փոխանցում - նոր գործարքի ստեղծում

Կապ հաստատել օպերատորի հետ - օպերատորին ուղարկել հաղորդագրություն

Վեբ տարբերակ

Բջջային տարբերակ

4.1 Դիտել մանրամասն

Այս դաշտում հնարավորություն ունեք տեսնելու օպերատորի հետևյալ տվյալները՝

- անվանում
- հասցե
- հեռախոսահամար
- կայք
- էլ. Հասցե

4.2 Մնացորդի հարցում

Մնացորդի հարցում իրականացնելիս տեսնում եք տվյալ օպերատորի մոտ առկա միջոցների ցանկը, որը կարող եք ներբեռնել Ձեզ հարմար տարբերակով (PDF, Excel) կամ ուղարկել Ձեր էլ. հասցեին: Առկա է նաև ժամանակահատվածի ֆիլտր, որը վերջին 3 տարիների միջակայքում թույլ է տալիս տեսնել հաշվի մնացորդը ցանկացած օրվա դրությամբ և արժեթղթի ֆիլտր, որտեղ լրացնում եք արժեթղթի համարը:

Վեբ տարբերակ

Բջջային տարբերակ





4.3 Գործարքի հարցում

Այս բաժնում տեսնում եք տվյալ հաշվեհամարով կատարված գործարքների ցանկը, որը հնարավոր է ներբեռնել PDF կամ Excel տարբերակներից որևէ մեկով կամ ուղարկել Ձեր էլ. հասցեին: Առկա է նաև ժամանակահատվածի ֆիլտր, որը թույլ է տալիս տեսնել ընտրված միջակայքում տվյալ հաշվով կատարված գործարքների ցանկը, արժեթղթի ֆիլտր՝ նշված արժեթղթով կատարված գործարքները, ինչպես նաև միջոցների ավելացման կամ նվազման ֆիլտր:

<u>Վեբ տարբերակ</u>



<u>Բջջային տարբերակ</u>



4.4 Կատարել փոխանցում[14]

Մինչ կընտրենք ցանկալի փոխանցման տեսակը, այս բաժնի վեբ տարբերակում ցույց է տալիս մինչ այդ կատարված փոխանցումները: Կրկնօրինակման հրահանգի կոճակը սեղմելիս տվյալ տողում առկա գործարքը կրկնօրինակվում է և բացվող նոր դաշտում տվյալներն ավտոմատ կերպով լրացված են լինում, պետք է միայն հաշվել միջնորդավճարը և հաստատել գործարքը: Էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը մուտքագրելուց հետո գործարքը կտեղափոխվի վճարման փուլ[15]:

Բջջային տարբերակի դեպքում պետք է ընտրել, այն փոխանցման տեսակը, որը ցանկանում եք իրականացնել:

<u>Վեբ տարբերակ</u>



<u>Բջջային տարբերակ</u>

14 Բջջային և վեբ տարբերակներում փոխանցում իրականացանելիս լրացվող դաշտերի բովանդակությունը նույնն է:
15 Վճարում իրականացնելու նկարագրությունը կարող եք տեսնել 8-րդ բաժնում:

4.4.1 «Ազատ առաքում» կամ «Պարզ» փոխանցում

Այս գործողության միջոցով իրականացվում է արժեթղթերի (այդ թվում՝ օտարերկրյա պահառուի միջոցով սպասարկվող արժեթղթերի, օրինակ՝ եվրոբոնդերի) փոխանցում մի հաշվից մյուսին, որի դեպքում չի պահանջվում ստացող կողմի հաստատումը կամ համաձայնությունը: Այս փոխանցման ժամանակ անհրաժեշտ է լրացնել հետևյալ տվյալները.

Ուղարկողի հաշվեհամարը - տվյալ հաշվի հաշվեհամարն է, որը լրացվում է ավտոմատ

ԱՄՏԾ - Արժեթղթերի եզակի համարն ընտրվում է տվյալ հաշվին առկա արժեթղթերի բացվող ցանկից

Ստացողի անուն - նշվում է ստացողի անունը, ազգանունը, հայրանունը

Ստացողի հաշվեհամար - նշվում է ստացող կողմի հաշվեհամարը

Փոխանցման տեսակ - ցանկից ընտրվում է գործարքի տեսակը (պետական պարտատոմսերի փոխանցում, փոխանցում-նվիրատվություն, և այլն)

Յուրաքանչյուր արժեթղթի արժեքը - Նշվում է միավոր արժեթղթի գինը (առկայության դեպքում)

Արժեթղթերի քանակ - Նշվում է փոխանցման ենթակա արժեթղթերի քանակը/անվանական ծավալը

Ընդհանուր արժեք - Յուրաքանչյուր արժեթղթի արժեքի և արժեթղթերի քանակի արտադրյալ

Արժույթ - ընտրել արժույթների բացվող ցանկից

Լրացուցիչ տեղեկություններ - նշվում է փոխանցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ (հիմքերի նկարագրություն, պայմանագրի ամսաթիվ և այլն)

Միջնորդավճար - «Հաշվել» հրահանգի միջոցով հաշվարկվում է միջնորդավճարն[16] ավտոմատ կերպով:

Վերոնշյալ գործողությունները կատարելուց հետո, կատարեք «Հաստատել» հրահանգը, որից հետո բացվող պատուհանում լրացրեք էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը: Գործողությունները բարեհաջող կատարելուց հետո ձևավորվում է վճարում «Վճարումներ» բաժնում, որտեղից էլ անհրաժեշտ է կատարել միջնորդավճարի վճարումը:

[16] Միջնորդավճարը հաշվելուց հետո, եթե որևէ տվյալ փոփոխվում է, վերջինս ջնջվում է: «Հաշվել» հրահանգը պետք է կրկին կատարել:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



4.4.2 Պորտֆոլիոյի փոխանցում

Պորտֆոլիոյի փոխանցման ժամանակ անհրաժեշտ տվյալներն են.

Ուղարկողի հաշվեհամար – տվյալ հաշվի հաշվեհամարն է, որը լրացվում է ավտոմատ

Ընտրել օպերատորին – եթե ունեք մեկից ավել օպերատորներ, որոնց ավելացրել եք հավելվածում, ապա բացվող ցանկում ցույց է տալիս տվյալ օպերատորներին և ընտրում եք այն օպերատորին, որի հաշվեհամարին ցանկանում կատարվում է փոխանցումը[17]

Ստացողի հաշիվը – լրացվում է ավտոմատ օպերատոր ընտրելուց հետո

Միջնորդավճար – հաշվարկվում է միջնորդավճարն ավտոմատ կերպով

Վերոնշյալ գործողությունները կատարելուց հետո, կատարեք «Հաստատել» հրահանգը, որից հետո բացվող պատուհանում լրացրեք էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը: Գործողությունները բարեհաջող կատարելուց հետո ձևավորվում է վճարում «Վճարումներ» բաժնում, որտեղից էլ անհրաժեշտ է կատարել վճարումը[18]:

Այս էջում առկա է նաև փոխանցումից հետո ուղարկող օպերատորի հաշվեհամարը փակելու հնարավորություն՝ համապատասխան նշումն իրականացնելու միջոցով: Օպերատորը հաշիվը փակվում է 5 աշխատանքային օրերի ընթացքում:

---

[17] Եթե բացվող ցանկում առկա չէ օպերատոր, որի հաշվեհամարին կատարվում է փոխանցումը, ապա ընտրում եք «Այլ» տարբերակը և ձեռքով լրացնում «Ստացողի հաշվեհամար» դաշտը:

[18] Տե՛ս 8-րդ բաժին

«Վերականգնել» հրահանգը կատարելու դեպքում՝ լրացված դաշտերը ջնջվում են:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



4.4.3 Dvp-Fop փոխանցումներ

Առաքումն ընդդեմ վճարման (DVP) ամենատարածված վճարային գործառնությունն է, որի դեպքում գործարքը հաշվարկվում է վճարման դիմաց: Այս տեսակի գործարքներում ոչ միայն պետք է համապատասխանեցնել կոնտրագենտ մասնակցի արժեթղթերը, այլ նաև ապահովել, որ արժեթղթերի գնորդը տրամադրի վճարման միջոցներ, որպեսզի գործարքը համարվի ավարտված:

Ներքին

Առաքում համաձայնությամբ (FoP) փոխանցման ժամանակ անհրաժեշտ է լրացնել հետևյալ տվյալները.

Ուղարկողի հաշվեհամարը - տվյալ հաշվի հաշվեհամարն է, որը լրացվում է ավտոմատ

Գնել/Վաճառել – ընտրվում է «Գնել» արժեթուղթ գնելու դեպքում, «Վաճառք»՝ վաճառելու

Արժեթղթերի եզակի համարը (ԱՄՏԾ) – նշվում է ձեռքբերվող կամ վաճառվող արժեթուղթը բացվող ցանկից

Ստացողի անունը – նշվում է ստացողի անունը, ազգանունը և հայրանունը

Ստացողի հաշվեհամար – նշվում է ստացող կողմի արժեթղթերի հաշվի համարը

Գործարքի տեսակը – Dvp կամ Fop փոխանցում՝ ընտրել բացվող ցանկից

Փոխանցման տեսակը – բացվող ցանկից նշվում է փոխանցման տեսակը

Արժեթղթերի քանակը – նշվում է ձեռք բերվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը

Արժույթ – Dvp փոխանցման ժամանակ անհրաժեշտ է նշել նաև համապատասխան արժույթը բացվող ցանկից

Ընդհանուր արժեք – նշվում է ընդհանուր գումարը

Գործարքի ամսաթիվը – նշվում է գործարքի կնքման ամսաթիվը

Վերջնահաշվարկի ամսաթիվը – նշվում է վերջնահաշվարկի ակնկալվող ամսաթիվը

Նշումներ - նշվում է փոխանցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ (հիմքերի նկարագրություն, պայմանագրի ամսաթիվ և այլն)

Միջնորդավճար - «Հաշվել» հրահանգի միջոցով հաշվարկվում է միջնորդավճարը ավտոմատ կերպով:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Վերոնշյալ գործողությունները կատարելուց հետո, կատարեք «Հաստատել» հրահանգը, որից հետո բացվող պատուհանում լրացրեք էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը: Գործողությունները բարեհաջող կատարելուց հետո ձևավորվում է վճարում «Վճարումներ» բաժնում, որտեղից էլ անհրաժեշտ է կատարել միջնորդավճարի վճարումը[19]:

[19] Տե՛ս 8-րդ բաժին

Արտաքին

Օտարերկրյա պահառուի մոտ պահվող արժեթղթերով առաքում համաձայնությամբ (FoP) փոխանցման ժամանակ անհրաժեշտ է լրացնել հետևյալ տվյալները.

Ուղարկողի հաշվեհամարը - տվյալ հաշվի հաշվեհամարն է, որը լրացվում է ավտոմատ

Գնել/Վաճառել – ընտրվում է «Գնել» արժեթուղթ գնելու դեպքում, «Վաճառք»՝ վաճառելու դեպքում

Արժեթղթերի եզակի համարը (ԱՄՏԾ) – վաճառքի դեպքում, բացվող ցանկից, ընտրվում է համապատասխան արժեթուղթը, իսկ գնելու դեպքում՝ լրացվում է օգտատիրոջ կողմից

Ստացողի անունը – նշվում է ստացողի անունը կամ անվանումը

Ստացողի հաշվեհամար – նշվում է ստացող կողմի արժեթղթերի հաշվի համարը

Գործարքի տեսակը – DvP կամ FoP փոխանցում՝ ընտրել բացվող ցանկից

Արժեթղթերի քանակը – նշվում է ձեռք բերվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը

Արժույթ – DvP փոխանցման ժամանակ անհրաժեշտ է նշել նաև համապատասխան արժույթը բացվող ցանկից

Ընդհանուր արժեք – DvP փոխանցման ժամանակ նշվում է ընդհանուր գումարը

Գործարքի ամսաթիվը – նշվում է գործարքի կնքման ամսաթիվը

Վերջնահաշվարկի ամսաթիվը – նշվում է վերջնահաշվարկի ակնկալվող ամսաթիվը

Շահառու - նշվում է շահառուի անունը կամ անվանումը

Վերջնահաշվարկի վայր – նշվում է BIC կոդը

Նշումներ - նշվում է փոխանցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ (հիմքերի նկարագրություն, պայմանագրի ամսաթիվ և այլն)

Միջնորդավճար - «Հաշվել» հրահանգի միջոցով հաշվարկվում է միջնորդավճարը ավտոմատ կերպով:

Վեբ տարբերակ *Բջջային տարբերակ*





Վերոնշյալ գործողությունները կատարելուց հետո, կատարել «Հաստատել» հրահանգը, որից հետո բացվող պատուհանում լրացնել էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը: Գործողությունները բարեհաջող կատարելուց հետո ձևավորվում է վճարում «Վճարումներ» բաժնում, որտեղից էլ անհրաժեշտ է կատարել միջնորդավճարի վճարումը:

4.4.4 Ֆոնդի փոխանցում

Ֆոնդի փոխանցում իրականացնելիս անհրաժեշտ է լրացնել հետևյալ տվյալները.

Ուղարկողի հաշվեհամարը - տվյալ հաշվի հաշվեհամարն է, որը լրացվում է ավտոմատ

Գնել - բացվող ցանկից անհրաժեշտ է ընտրել «Գնել» կամ «Վաճառք», որից հետո «Ստացողի հաշվեհամար» դաշտն ավտոմատ կերպով լրացվում է

ԱՄՏԾ - Արժեթղթերի եզակի համարն ընտրվում է տվյալ հաշվին առկա արժեթղթերի բացվող ցանկից

Ստացողի անուն - նշվում է ստացողի անունը, ազգանունը, հայրանունը

Ստացողի հաշվեհամար - ավտոմատ լրացվում է ստացող կողմի հաշվեհամարը

Գործարքի տեսակ - ավտոմատ լրացվում է որպես DvP փոխանցում

Փոխանցման տեսակ - ցանկից ընտրվում է գործարքի տեսակը

Արժեթղթերի քանակ - գնելու դեպքում ավտոմատ է լրացվում, իսկ վաճառքի դեպքում՝ ոչ

Արժույթ - ավտոմատ լրացվում է ՀՀ դրամ

Ընդհանուր արժեք – նշվում է փոխանցման ենթակա ֆոնդի չափը

Գործարքի ամսաթիվ - գործարքի կատարման ամսաթիվն է, որը լրացվում է ավտոմատ

Վերջնահաշվարկի ամսաթիվ - գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրն է, որը լրացվում է ավտոմատ

Նշումներ - նշվում է փոխանցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ (հիմքերի նկարագրություն, պայմանագրի ամսաթիվ և այլն)

Միջնորդավճար - «Հաշվել» հրահանգի միջոցով հաշվարկվում է միջնորդավճարը ավտոմատ կերպով:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Վերոնշյալ գործողությունները կատարելուց հետո, կատարեք «Հաստատել» հրահանգը, որից հետո բացվող պատուհանում լրացրեք էլ. հասցեին ուղարկված հաստատման վեցանիշ կոդը: Գործողությունները բարեհաջող կատարելուց հետո ձևավորվում է վճարում «Վճարումներ» բաժնում[20], որտեղից էլ անհրաժեշտ է կատարել միջնորդավճարի վճարումը:

4.5 Կապ հաստատել օպերատորի հետ

Օգտատիրոջ տեղափոխում է «Զրուցարան» բաժին, որտեղ հնարավոր է ուղարկել հաղորդագրություններ և ֆայլեր օպերատորին, ինչպես նաև ստանալ դրանց պատասխանները:

[20] Տե՛ս 8-րդ բաժին

Բաժին 5. Քվեարկություն

Հավելվածը հնարավորություն է տալիս քարտուղարի կողմից ստեղծվող քվեարկություններին մասնակցել արդեն էլեկտրոնային քվեարկության միջոցով: Էլեկտրոնային քվեարկության բաժնում տեսնում եք «Ակտիվ»՝ տվյալ պահին դեռ ընթացքի մեջ գտնվող քվեարկությունները և «Արխիվ»՝ արդեն իսկ ավարտված քվեարկությունները:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Քվեարկության «Ակտիվ» և «Արխիվ» ենթաբաժիններում տեսնում եք.

- Հանդիպման ID-ին
- Թողարկողի անվանումը
- Հանդիպման տեսակը, որը կարող է լինել՝
  - *Տարեկան ընդհանուր ժողով*
  - *Արտահերթ ընդհանուր ժողով*
  - *Հերթական ընդհանուր ժողով*
  - *Դատարան*
  - *Այլ*
- Քվեարկվող հարցերի քանակը

- Հանդիպման ամսաթիվը/Վերջին փոփոխության ամսաթիվը(քվեարկությունը ստեղծելիս քարտուղարը կարող է թույլ տալ մինչ քվեարկության ժամկետի ավարտը փոփոխել քվեարկության արդյունքը)
- Հաշվեհամարը
- Կարգավիճակ

  Մուտքագրված – քվեարկությունը դեռ չի սկսվել

  Ակտիվ – քվեարկությունը սկսվել է և մասնակիցները կարող են քվեարկել

  Ավարտված – քվեարկությունն արդեն ավարտվել է

Քվեարկության ենթակա տողի վրա սեղմելիս բացվում է տվյալ քվեարկության հարցերի ցանկը: Յուրաքանչյուր հարց բաղկացած է հետևյալ կետերից.

- Վերնագիր
- Նկարագրություն
- Հարցի ID
- ԱՄՏԾ
- Քվեարկող արժեթղթերի քանակ
- Ժողովի տեսակ՝

  Արտառոց

  Հատուկ

  Սովորական

  Այլ

- Քվեարկության տեսակը՝

  Բաց

  Փակ

- Քվեարկությունը վերաբերվում է՝

  Հաշիվներին

  Տնօրեններին

  Լուծարմանը

  Պարգևատրմանը

  Այլ

- Քվեարկությունը ներկայացվել է՝

  Բաժնետերերի կողմից

  Վարչության կողմից

Ղեկավարության կողմից

- Քվեի տեսակը՝

  Կողմ

  Դեմ

  Ձեռնպահ

- Փաստաթղթեր՝ եթե առկա են:

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ

Քվեարկության ներկայացված յուրաքանչյուր հարց քվեարկում եք առանձին-առանձին՝ սեղմելով «Քվեարկել» կոճակին: Բացվող ցանկից ընտրում եք տարբերակներից որևէ մեկը, կամ եթե դեռ չեք կողմնորոշվել, ապա կարող եք առանց քվեարկելու փակել պատուհանը և այդ հարցին անդրադառնալ հետո:



Առաջարկվող տարբերակների ընտրությունից կախված՝ «Քվեարկության տեսակ» տողի արժեքը, համապատասխանաբար, փոխվում է՝ Կողմ/Դեմ/Ձեռնպահ:

Քննարկման ներկայացված բոլոր հարցերին քվեարկելուց հետո, սեղմում եք «Կարատել քվեարկություն» կոճակը և ձեր քվեարկությունը համարվում է ավարտված[21]:

Քարտուղարը կարող է նաև հնարավորություն ընձեռել քվեարկության մասնակիցներին քվեարկվող հարցի շրջանակներում ուղարկել հաղորդագրություններ, ինչպես նաև ուղարկվող հաղորդագրությանը կցել ֆայլեր:



Քվերակությունն ավարտվելուց հետո այն տեղափոխվում է «Արխիվ» բաժին: Յուրաքանչյուր տողի վրա սեղմելիս բացվում է այդ քվեարկության հարցերի ցանկը, որտեղ հնարավորություն ունեք տեսնելու քվեարկության արդյունքները տոկոսներով արտահայտված, քվեարկության ընթացկում գրված հաղորդագրությունները:

Վեր տարբերակ

Բջջային տարբերակ



[21] Եթե քվեարկությունը ստեղծելիս քարտուղարը թույլ է տվել մինչ քվեարկության ժամկետի ավարտը փոփոխել քվեարկության արդյունքները, ապա այդ ժամկետում կարող եք փոխել քվեարկության ձեր նշած տարբերակները:

Բաժին 6. Կենսաթոշակային քաղվածք

Եթե Դուք հանդիսանում եք կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից, ապա «Կուտակային կենսաթոշակ» բաժնում հնարավոր է իրականացնել հետևյալ գործողությունները՝

- Փոխել ֆոնդը
- Գրանցել էլեկտրոնային հասցե
- Մնացորդի հարցում

«Փոխել ֆոնդը» հրահանգն իրականացնելիս հավելվածը հնարավորություն է տալիս ընտրել այլ ֆոնդ։

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ

«Գրանցել էլ. հասցե» հրահանգը կատարելիս անհրաժեշտ է մուտքագրել այն էլ. հասցեն, որին ցանկանում եք ստանալ կենսաթոշակային հաշվի քաղվածքները։

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



«Մնացորդի հարցում» հրահանգը իրականացնելիս, տվյալների համապատասխանության դեպքում, ցուցադրում է հարցման պահի դրությամբ կենսաթոշակային հաշվի մնացորդը և վերջին տասը փոխանցումները:

Աղյուսակի վերևում երևում է կենսաթոշակային հաշվին կուտակված մնացորդը և արժույթը:

Ցանկում տեսնում ենք վերջին տասը փոխանցումների ամսաթիվը, կենսաթոշակային ֆոնդը, այն ժամանակահատվածը, որի համար կատարվել է փոխանցումը և փոխանցված գումարի մեծության չափը (նշված ժամանակահատվածում գործատուի և պետության կողմից փոխանցումների հանրագումար):

<u>Վեբ տարբերակ</u>





<u>Բջջային տարբերակ</u>



Բաժին 7. Զրուցարան

Հաղորդագրություններ հնարավոր է ուղարկել ինչպես «Հիմնական» էջում առկա «Կապ հաստատել օպերատորի հետ» բաժնից, այնպես էլ «Զրուցարան»-ից: Այս բաժնում երևում է Ձեր նամակագրությունը տեխնիկական աջակցություն տրամադրող մասնագետի հետ, օպերատորների հետ, ինպես նաև էլեկտրոնային քվեարկության ժամանակ գրված նամակագրությունը:

Վեբ տարբերակ

Բջջային տարբերակ



Բաժին 8. Վճարումներ

Կատարված փոխանցումների գծով ձևավորված միջնորդավճարների ամբողջական ցանկը երևում է այստեղ: Վճարումներ բաժնում առկա է երեք բաժին.

- Ընթացիկ վճարումներ/Չվճարված - ձևավորված, սակայն դեռևս չվճարած միջնորդավճարներ
- Պահառության վճար - յուրաքանչյուր ամիս ավտոմատ կերպով ձևավորվող վճար
- Վճարումների պատմություն/Վճարումներ - արդեն իսկ վճարված միջնորդավճարներ

Վեբ տարբերակ



Բջջային տարբերակ



Վճարումները հնարավոր է իրականացնել կանխիկ և անկանխիկ եղանակներով՝ ամբողջը միանգամից նշելով կամ առանձին-առանձին: Տվյալ պահին վճարվող տողերը նշելուց հետո, «Ընդհանուր արժեք» տողում տեսնում եք վճարման ենթակա գումարի մեծության չափը, որից հետո ընտրում եք «Քարտ» կամ «Կանխիկ» վճարման տարբերակների մեկը և կատարում «Վճարել» հրահանգը:

Եթե վճարման տարբերակն ընտրել եք «Կանխիկ», ապա «Վճարման կարգավիճակ»-ն «Ընթացքի մեջ է» կարգավիճակից ձեռք է բերում «Սպասում է ԱՕ-ին» կարգավիճակ: Այս դեպքում վճարումն իրականացնում եք Ձեր օպերատորի մոտ, որից հետո այն կտեղափոխվի «Վճարումների պատմություն» բաժին՝ վճարման «Կատարված» կարգավիճակ ձեռք բերելով:

Ինչպես նաև օպերատորի միջոցով հնարավոր է չեղարկել տվյալ վճարումը: Այս դեպքում այն ևս կտեղափոխվի «Վճարումների պատմություն» բաժին, ձեռք բերելով վճարման «Չեղարկված» կարգավիճակ:

Քարտային տարբերակով վճարումն իրականացնելու ժամանակ բացվող դաշտում լրացնում եք Ձեր էլ. հասցեին ուղարկված վեցանիշ հաստատման կոդը, որից հետո բացվող դաշտում լրացնում եք քարտի տվյալները և հաստատում գործարքը: Վճարումը բարեհաջող իրականացվելուց հետո, տվյալ վճարումը տեղափոխվում է «Վճարումների պատմություն» բաժին:

Վեբ տարբերակ *Բջջային տարբերակ*





Յուրաքանչյուր ամիս, պայմանագրով նախատեսված վճարման օրը, «Պահառության վճար» բաժնում ձևավորվում է պահառության վճար, որը ենթակա է վճարման վերը նշված տարբերակներից որևէ մեկով:

Վեբ տարբերակ *Բջջային տարբերակ*


Ընթացիկ վճարումներ
Պահառության վճար
Վճարումների պատմություն
Այս բաժնում Ձեր չվճարված պարտքերն են: Օգտագործելով դիմումը, Դուք կարող եք ընտրել «քարտ» տարբերակ, և վճարումը կգանձվի՝ օգտագործելով Ձեր քարտի մուտքագրված տվյալները: Իսկ ընտրելով «Կանխիկ» տարբերակը՝ վճարումը կկատարվի հաշվի օպերատորի միջոցով՝ առանց այս հավելվածի վճարման եղանակի կիրառման:
Գործողություն
Քանակ
Ամսաթիվ
Մասնակից
Թողարկողի անունը
ԱՄՏՏ
Կարգավիճակ
2258064.515000
2023-08-31
Ընթացքի մեջ է
1083870.967200
2023-08-31
Ընթացքի մեջ է
Քարտ
Կանխիկ
Ընդհանուր արժեք: 0 AMD
VISA
ArCa
МИР
Վճարել


12:18
Վճարումներ
Չվճարված
Պահառության վճար
Վճարումներ
Սկիզբ
2023-08-31
Մասնակից
ԱՄՏՏ
023
Գումարը
0.422176
Թողարկողի անունը
Վճարել քարտով
Վճարել կանխիկ
Վճարել

Բաժին 9. Մեր մասին

«Դեպոզիտարիա» ենթակետի ներքո կարող եք գտնել հակիրճ տեղեկատվություն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի մասին:

«Քվեարկություն» ենթակետը ներկայացնում է էլեկտրոնային քվեարկության էությունը, անկցաման կարգը, մասնակիցների քվեարկությանը մասնակցելու կարգը:

«Նորություններ» բաժնում պարբերաբար տեղադրվում են վերջին նորությունները, որոնք տեղի են ունենում արժեթղթերի շուկայում:

«Հաճախ տրվող հարցեր» ենթաբաժնում Դեպոզիտարիայի մասին տրվող հիմնական հարցերն են:

«Կապ» ենթակետում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի գտնվելու վայրն է՝ ներկայացված քարտեզով, հեռախոսահամարը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն:

Վեբ տարբերակ

Բջջային տարբերակ